



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17002

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունիսի 27-ի թիվ 100-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/62-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԶԱՂԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Արա Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգսյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սամվել Զաղինյանին (արտոնագիր թիվ 487) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետ Վ.Ս.Հարությունյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) 2016թ. դեկտեմբերի 28-ին գրությամբ դիմել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահին՝ խնդրելով քննարկել փաստաբան Սամվել Զաղինյանի (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության հարցը: Ըստ գրության, Սամվել Զաղինյանը անհարգելի պատճառով և չենթարկվելով քննիչի օրինական կարգադրությանը, լքել է քննչական գործողության վայրը՝ քննչական սենյակը, որտեղ տեղի էր ունենում նրա պաշտպանյալի և քննիչի մասնակցությամբ քննչական գործողություն՝ այդպիսով խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 10.02.2017թ. թիվ 18-Ա/ԿԳ-17002 որոշմամբ փաստաբան Սամվել Զաղինյանի

(արտոնագիր թիվ 487) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.6.1 և 6.1.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Փաստաբանության մասին օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ պետական և տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների դիմումները, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը, իսկ տվյալ դեպքում Սամվել Զաղինյանի արարքում ենթադրաբար առկա էին Փաստաբանի վարքագծի կանոնագրի 2.6.1. և 6.1.1. ենթակետերի խախտման հատկանիշներ:

Որոշումը կայացվել է դիմումի մեջ նշված փաստերը ստուգելու նպատակով՝ միաժամանակ արձանագրելով, որ կարգապահական վարույթ հարուցելը ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

15.02.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Հովհաննես Մաթևոսյանին՝ կարգապահական գործ նախապատրաստելու նպատակով:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը Պալատ ներկայացրած իր բացատրության մեջ նշել է, որ փաստաբան Սամվել Զաղինյանը քննչական գործողությունը խափանելու, իր պաշտպանյալի նկատմամբ բարենպաստ հետևանքի հասնելու նպատակով դիմել է օրենքով արգելված միջոցի, խափանել է քննչական գործողությունը, քննչական գործողության կատարման պահին լքել է քննիչի աշխատասենյակը: Մասնավորապես, հանդես գալով որպես Ռուսաստանի Դաշնությունից քրեական հետապնդման նպատակով ՀՀ արտահանձնված անձի պաշտպան, վերջինս մասնակցել է արտահանձնումից անմիջապես հետո մեղադրանք առաջադրելու և որպես մեղադրյալ հարցաքննելու դատավարական ու քննչական գործողություններին: Իր պաշտպանյալի ինքնազգացողությունը հարցաքննության պահին վատացել է, որի պատճառով հրավիրվել է շտապօգնություն: Անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելուց հետո, երբ բժիշկը հայտարարել է, որ մեղադրյալի ինքնազգացողությունը բարելավվել է, որոշել է շարունակել հարցաքննությունը, սակայն պաշտպանը լքել է քննիչի աշխատասենյակը, քննչական գործողություն կատարելու վայրը, որի պատճառով խափանվել է քննչական գործողությունը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Պատասխանողը հայտնել է, որ քննիչի աշխատասենյակը քննչական գործողության կատարման պահին լքել է, որպեսզի դրանով կանխի իր պաշտպանյալի նկատմամբ իրականացվող խոշտանգումը: Մասնավորապես, նա նշել է, որ իր պաշտպանյալն արտահանձնվել էր Ռուսաստանի Դաշնությունից, և երկարատև ճամփորդությունից հետո, որը կատարել էր հարկադրանքի տակ, ազատությունից զրկված վիճակում, նրան հնարավորություն չէր տրվել հանգստանալու, այլ օդանավայականից անմիջապես տեղափոխվել էր քննիչի առանձնասենյակ, որտեղ քննիչը սկսել էր կատարել մեղադրանք առաջադրելու և որպես մեղադրյալ հարցաքննելու դատավարական և քննչական գործողություններ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203 և 212-րդ հոդվածների հիմքով: Մինչդեռ, իր պաշտպանյալը գտնվել է հյուծված վիճակում, այլևս դադարել էր ըմբռնել հարցերի բովանդակությունը, առողջական վիճակը կտրուկ վատացել էր, ուներ ուժեղ գլխացավ, որի պատճառով անհրաժեշտություն էր առաջացել կանչել շտապօգնություն, որի ժամանելուց կարճ ժամանակ անց նրա ինքնազգացողությունը թեև փոքր ինչ բարելավվել էր, սակայն նա շարունակում էր իրեն զգալ վատառողջ, խնդրել էր հետաձգել հարցաքննությունը և փոքր ինչ դադար տալ հանգստանալու, հոգնեցուցիչ ճամփորդությունից հետո կազդուրվելու և քննչական գործողությանը հոգեպես և ֆիզիկապես առողջ վիճակում մասնակցելու համար, քանի որ դրանից էր կախված նաև իր պաշտպանության արդյունավետությունը: Այդուհանդերձ, բոլորովին անհարկի, առանց որևէ օբյեկտիվ հիմնավորման իր պաշտպանյալի և իր՝ քննչական գործողությունը հետաձգելու վերաբերյալ խնդրանքները մերժվել էին, որի պատճառով, կանխելու համար իր պաշտպանյալի խոշտանգումը, ստիպված էր եղել լքել քննիչի աշխատասենյակը: Իր բացատրության մեջ նաև հավելել է, որ նպատակ չի ունեցել խափանել քննչական գործողությունը, այլ առաջնորդվել է միմիայն իր պաշտպանյալի առողջության դեմ կատարված ոտնձգությունը դադարեցնելու նպատակով, քանի որ դատավարական բոլոր այլ հնարավոր միջոցները սպառվել էին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Կարգապահական վարույթին վկաներ չեն հրավիրվել կամ այլ կերպ մասնակցել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես ՄԱթևոսյանը 12.04.2017թ. ներկայացրել է եզրակացություն: Ըստ եզրակացության սույն վարույթի շրջանակներում անհրաժեշտ է պարզել.

- Արդյո՞ք քննչական գործողությունները շարունակելու վերաբերյալ նախաքննության մարմնի պահանջը իրավաչափ, օրինական է եղել և քննչական գործողության իրականացումը տվյալ իրավիճակում կարող էր արդյո՞ք հանգեցնել Սամվել Զաղինյանի պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի խախտմանը,

- Պաշտպանյալի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում որքանով են պաշտպան Սամվել Զաղինյանի գործողությունները համապատասխանել քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- 2016թ. փետրվարի 14-ին հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Նոդարի Ասադովը ՌԴ իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել և արգելանքի է վերցվել: Հունիսի 18-ին Նոդարի Ասադովի պաշտպանությունը ստանձնել է փաստաբան Սամվել Զաղինյանը:
- Հոկտեմբերի 29-ին Նոդարի Ասադովը տեղափոխվել է ՀՀ և ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:
- Նույն օրը նրան առաջադրվել է մեղադրանք և նա հարցաքննվել է որպես մեղադրյալ: Փաստաբան Սամվել Զաղինյանը միջնորդել է դադարեցնել քննչական գործողությունը՝ մեղադրյալին բուժզննման և հանգստի հնարավորություն տալու պատճառաբանությամբ: Հրավիրվել է շտապ բուժօգնության բրիգադ, որը հետազոտել է Նոդարի Ասադովին, ցուցաբերել բուժօգնություն և արձանագրել <<լավացում>>:
- Փաստաբան Զաղինյանը, չենթարկվելով քննիչի կարգադրությանը, չսպասելով իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող մյուս քննչական գործողությունների՝ մեղադրյալի պաշտպանական իրավունքի պարզաբանման և առաջին հարցաքննության կատարմանը, լքել է քննչական սենյակը, որի արդյունքում, փաստորեն, խափանվել է նշված քննչական գործողությունների կատարումը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողի և Պաշտպանողի բացատրություններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից կարգապահական գործի շրջանակներում տրամադրված տեղեկանքի համաձայն

փաստաբան Սամվել Զաղինյանի նկատմամբ նախկինում հարուցված են եղել չորս կարգապահական վարույթներ, որոնցից երեքը կարճվել են արտոնության կիրառման հիմքով, իսկ մեկ դեպքում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, որը որպես տույժ մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Զաղինյանի նկատմամբ Կանոնագրքի 2.6.1 և 6.1.1 ենթակետերի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պայմանաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ **օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպատավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:**

Կանոնագրքի 6.1.1 ենթակետի համաձայն՝ **վստահորդի շահերը մինչդարական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:**

Կանոնագրքի 6.1.1 ենթակետի կանոնը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և վարույթն իրականացնող մարմնի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված է, որ **պաշտպանը պարտավոր է՝ ... ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին:**

Որոշում կայացնելիս Խորհուրդը առաջնորդվել է վերը նշված երկու հարցադրումների շրջանակներում կայացրած հետևյալ եզրահանգումներով՝ հաշվի առնելով նաև նախկինում, նման հանգամանքների հիմքով կայացրած իր որոշումները:

Պատասխանելով վերոնշյալ առաջին հարցադրմանը՝ **արդյոք քննչական գործողությունները շարունակելու վերաբերյալ նախաքննության մարմնի պահանջ իրավաչափ, օրինական է եղել և քննչական գործողության իրականացումը տվյալ իրավիճակում կարող էր արդյոք հանգեցնել Սամվել Զաղինյանի պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի խախտմանը**, Խորհուրդը գտնում է, որ քննչական գործողությունները շարունակելու վերաբերյալ նախաքննական մարմնի պահանջը իրավաչափ չէր՝ նույնիսկ թեև այդ պահանջը

չէր հակասում օրենքով սահմանված ընթացակարգային պարզ պահանջներին:

Առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով, Խորհուրդը գտնում է, որ արտահանձնումից անմիջապես հետո մեղադրյալի նկատմամբ քննչական գործողություն կատարելու համար նախաքննական մարմինը չուներ օբյեկտիվորեն արդարացված անհրաժեշտություն, որը կգերակայեր մեղադրյալի արդար դատաքննության հիմնարար իրավունքին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի իմաստով՝ նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի զուգակցությամբ: Մինչդեռ, մեղադրյալի համար այդ առաջին հարցաքննությունը, հաշվի առնելով նրա առողջական վիճակը, կարող էր ունենալ անդառնալի հետևանք դատավարության ողջ հետագա ընթացքի համար, որը կարող էր հանգեցնել ողջ դատավարության անարդարացիությանը: Պաշտպանի ներկայությունը մեղադրյալի առաջին հարցաքննության ընթացքում ունի առանցքային նշանակություն, և առաջին հարցաքննության ընթացքում ստացված փաստական տվյալները, ապացույցները որպես կանոն ձեռք են բերում առանցքային ապացուցողական նշանակություն քրեական դատավարության ողջ հետագա ընթացքի համար, և չափազանց մեծ է վտանգը, որ առաջին հարցաքննության ընթացքում պաշտպանության հիմնարար իրավունքի խախտումը դատավարության արդարացիությունը էապես կխաթարի (տե՛ս, այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը *Իմբրիոշկան ընդդեմ Շվեյցարիայի*, թիվ 13972/88, 24/11/1993, § 36, և Սալբուզն ընդդեմ Թուրքիայի, ՄՊ, 27/11/2008, § 55):

Հաշվի առնելով այս հանգամանքը, Խորհրդի համար զարմանալի, և միևնույն ժամանակ անհասկանալի, թե ինչու էր վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել քննչական գործողությունը տեղափոխել մեկ այլ օր՝ հաշվի առնելով, որ մեղադրյալը, ով տեղափոխվել էր քննիչի աշխատասենյակ արտահանձնումից անմիջապես հետո, օդանավայականից, գտնվում էր հոգնած, հյուծված ֆիզիկական և բարոյահոգեբանական վիճակում, որն ուղեկցվում էր առողջական սուր խնդիրներով, և որի պայմաններում մեղադրյալն ակնհայտորեն զրկված էր մրցակցային և իրավահավասարության պայմաններում իր պաշտպանությունը կազմակերպելու և իրացնելու հնարավորությունից:

Պաշտպանը առաջնորդվել է այն մտայնությամբ, որ իր պաշտպանյալի հարցաքննության համար բացակայում էին հավասարության, արդարության պահանջների պահպանմամբ հավասար ու պատշաճ հնարավորություններ, իր պաշտպանյալը գտնվում էր էապես խոցելի իրավիճակում, և նման հանգամանքում նա փորձել է, առաջնորդվելով Կանոնագրքի 2.6.1. կետով, գործել իր վստահորդի նպաստավոր շահերից: Հակառակ դեպքում կխախտվեր իր պաշտպանյալի օրինական շահերը, նրա արդյունավետ պաշտպանության սահմանադրական իրավունքը, և դա մեծամասամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումները և գործողությունները իրավաչափ

չէին և չէին բխում արդարացի և մրցակցային դատավարության սկզբունքներից՝ ըստ Քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի՝ 17-րդ հոդվածի ընդհանուր համատեքստում, իսկ ստատուտային այս նորմերը՝ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ մասի և 63-րդ հոդվածների ընդհանուր համատեքստի լույսի ներքո: Այս փաստարկները, դրանք գնահատելով իրավունքի գերակայության լույսի ներքո, պատասխանում են նաև վերը շարադրված երկրորդ հարցին, մասնավորապես՝ թե **որքանով են պաշտպան Սամվել Ջաղինյանի գործողությունները համապատասխանել քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին:**

Խորհուրդն արձանագրում է, որ թեև պաշտպանի գործողությունները հակասել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համապատասխան դրույթներին առ այն, որ քննչական գործողության ընթացքում պաշտպանը պարտավոր է ենթարկվել քննիչի հրահանգներին, սակայն այս դրույթը անհրաժեշտ է դիտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ և 23-րդ հոդվածի 5-րդ մասի ընդհանուր դրույթների լույսի ներքո, եթե 73-րդ հոդվածի դրույթի պահանջին հեղուկ կարող է առարկայազուրկ դարձնել արդարացի դատական քննության իրավունքը և դրա բաղկացուցիչ՝ մրցակցային դատավարության սկզբունքը: Այլ կերպ ասած, 73-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթի կիրառման նպատակը պետք է գնահատվի 17 և 23-րդ հոդվածներով սահմանված մարդու հիմնարար իրավունքների համապեքստում: Վերևում արդեն շարադրվել է, որ քննիչի պարտադրանքը քննչական գործողությունը շարունակելու մասին ոչ իրավաչափ էր, քանի որ դա սպառնում էր առարկայազուրկ դարձնել դատավարության արդարացիությունն իր ամբողջությամբ, ինչպես նաև, որ քննիչի կողմից ներկայացվող նման պարտադրանքի համար որևէ օբյեկտիվ անհրաժեշտություն, որ կգերակայեր արդարադատության հասարակական շահը, բացակայում էր:

Հետևաբար, վարույթն իրականացնող մարմնի գործողություններն իրավաչափ չէին և կարող էին հանգեցնել Սամվել Ջաղինյանի պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, որի հիմքով էլ Խորհուրդ գտնում է, որ փաստաբանի կողմից վարքագծի խախտում տեղի չի ունեցել:

Սույն որոշմանը հանգելիս Խորհուրդը առաջնորդվում է նաև նախկինում նման գործով կայացրած իր որոշմամբ: Մասնավորապես, 26.05.2009թ. թիվ 12/1-Ա որոշմամբ Խորհուրդը մի խումբ փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել է, ըստ էության, այն հիմքով, որ՝ նշված քրեական գործով դատավորի ոչ օրինական գործողություններն այլընտրանք չեն թողել փաստաբաններին: Պալատի Խորհուրդը, վկայակոչելով տվյալ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, գտել է, որ *պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն... որ այս նորմը չի կարող տարածական մեկնաբանություն*

ունենալ՝ այն չի կարող մեկնաբանվել այնպես, որպեսզի պարտադրի պաշտպանին անվերապահորեն հեղինակել իր պաշտպանյալի բոլոր ցանկություններին կամ քմահաճույքներին: Այնուամենայնիվ, եթե խոսքը գնում է քրեական գործով վարույթի հետ կապված վստահորդի շահերին, և այդ շահերը օրինական են, ապա պաշտպանը բոլոր դեպքերում կրում է պարտականություն՝ չկատարել իր վստահորդի շահերին հակասող գործողություն:

Առաջնորդվելով վերը նշված իրավական դիրքորոշմամբ, ինչպես նաև վերը շարադրված փաստերի իր սեփական գնահատմամբ, Խորհուրդը գտնում է, որ տվյալ հանգամանքների ներքո փաստաբան Սամվել Զադինյանի գործողություններում բացակայում է Կանոնագրքի 2.6.1 և 6.1.1 ենթակետերի պահանջների խախտում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 10.02.2017թ. թիվ 18-Ա/ԿԳ-17002 որոշմամբ փաստաբան Սամվել Զադինյանի (արտոնագիր թիվ 487) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1. և 6.1.1. ենթակետերի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի Խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Արայիկ Ղազարյան